



Հայաստանի փոքր համայնքների ջրային ծրագիր

Ծրագիր Հ. 610-1182



ՇԱՀԱԳՐԳԻՌ ԿՈՂՄԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՊԼԱՆ

IV Եռամսյակ

12 / 2013

Բովանդակություն

1.	ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	1-1
2.	ՆԱԽԱԳԾԻ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏԸ	2-1
3.	ՇԱՀԱԳՐԳԻՌ ԿՈՂՄԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ	3-1
4.	ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ՆԱԽԱԳԾԻ ՄՇԱԿՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ	4-1
5.	ՆԱԽԱԳԾԻ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ԵՎ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ԾՐԱԳԻՐ	5-1
5.1	Տեղեկատվության հրատարակում էլեկտրոնային և տպագիր տարբերակով	5-1
5.2	ՇՄԱԳ փաթեթի մշակում և ներկայացում հանրությանը	5-1
5.3	ՇՄԱԳ փաթեթի վերաբերյալ մեկնաբանությունների ստացում	5-2
5.4	Շահառուների ներգրավվածության ծրագիր	5-2
6.	ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ	6-1
6.1	Բողոքարկման մեխանիզմ արտաքին շահառուների համար	6-1
6.2	Բողոքարկման մեխանիզմ ներքին շահառուների համար	6-3
6.3	Բողոքարկման մեխանիզմ աշխատողների համար	6-3
6.4	Բողոքարկման մեխանիզմ կապալառուների համար	6-6
6.5	Բողոքարկման մեխանիզմի մոնիթորինգ և գնահատում	6-6
7.	ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	7-1
	Հավելված 1: Շահագրգիռ կողմերի ցանկ	
	Հավելված 2: Հանրային բողոքի ձև	
	Հավելված 3: Բողոքի ձև աշխատողների և վարձու հիմունքներով ներգրավված աշխատողների համար	
	Հավելված 4: ՎԶԵԲ աշխատանքային պահանջները շինարարության կապալառուներին	
	Հավելված 5: Շահառուների իրազեկվածություն	
	Հավելված 6: Նկարներ	
	Աղյուսակ 1-1: Համայնքների ցանկ	1-2
	Աղյուսակ 4-1: Հանդիպումների ցանկ	4-1
	Աղյուսակ 6-1: Ծրագրում ներգրավված ընկերությունների աշխատողների բողոքարկման մեխանիզմի սկզբունքները	6-4
	Նկար 1-1: Հայաստանի մարզային քարտեզ	1-3

Հապավումների ցանկ

ՀՓՀՋԾ	Հայաստանի փոքր համայնքների ջրային ծրագիր
ՀՋԿ	«Հայջրմուկոյուղի» ՓԲԸ
ՎՋԵԲ	Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ
ԵՆԲ	Եվրոպական ներդրումային բանկ
Պատվիրատու	«Հայջրմուկոյուղի» ՓԲԸ
ՆԾՅՏ	Ներդրումային ծրագրերի համակարգման տնօրինություն
Խոհիդատու	Fichtner Water & Transportation GmbH՝ «Ջրտուր» ՍՊԸ-ի հետ
ՇՆԿ	Շինարարական նորմեր և կանոններ
ՇԿՆՊ	Շահագրգիռ կողմերի ներգրավման պլան
ՇՄԱԳ	Շրջակա միջավայրի ազդեցության գնահատում
ՕԿՋ	Օրվա կարգավորման ջրամբար
EN	Եվրոպական նորմեր
FWT	Fichtner Water & Transportation GmbH
Մգ/լ	Միլիգրամ/լիտր
Մգ-էկվ-լ	Միլիգրամ-էկվիվալենտ-լիտրում
ԿՄԿ	Կեղտաջրերի մաքրման կայան
ՏԻՍ	Տեղական ինքնակառավարման մարմիններ
ԿՊԶ	Կառավարման պայմանագիր

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետությունը, շարունակելով համագործակցությունը Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (ՎՋԵԲ) հետ 2011 թվականին մշակել է «Հայաստանի փոքր համայնքների ջրային ծրագիրը» այնուհետև Ծրագիր (գործառնական համար 40718), որը ներառում է (ա) Տավուշ, Լոռի, Շիրակ, Գեղարքունիք, Կոտայք, Սյունիք և Վայոց Ձոր մարզերում համայնքային ջրամատակարարման համակարգերի բարելավում (բ) կեղտաջրերի մաքրման կայանների վերանորոգում Տավուշ (Դիլիջան քաղաք) և Վայոց Ձոր (Ջերմուկ քաղաք) մարզերում:

Հետևյալ համաձայնագրերն են կնքվել հիշյալ ծրագրի շրջանակներում՝

ա) Ֆինանսավորման համաձայնագիր («Դրամաշնորհային համաֆինանսավորում»): դրամաշնորհային միջոցները կազմել են 7.6 մլն ԵՎԸ, կնքվել է 2011թ. հունվար ամսին, Եվրոպական Միության ի դեմս Եվրոպական Հանձնաժողովի, Հայաստանի Հանրապետության ի դեմս ՀՀ Ֆինանսների նախարարության և «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի միջև:

բ) Վարկային համաձայնագիր. Վարկային միջոցները կազմել են 6.5 մլն ԵՎԸ, կնքվել է 2011թ. հուլիսի 14-ին Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի միջև:

Ծրագիրը նախատեսում է նաև 6.5 մլն ԵՎԸ վարկային միջոցների տրամադրում Եվրոպական ներդրումային բանկի կողմից («ԵՆԲ համաֆինանսավորում»):

Ծրագիրը նախատեսում է նաև տեխնիկական դրամաշնորհի տրամադրում այլ դոնոր կազմակերպությունների կողմից՝ 1.1 մլն ԵՎԸ գումար:

Նշված ծրագրի շրջանակներում ներդրումների ծավալը կկազմի 21.7 մլն Եվրո:

Ծրագիրն ուղղված է ՀՀ 7 մարզերի 14 քաղաքների և 3 գյուղերի Ջ և Ջ համակարգերի տեխնիկական վիճակի բարելավմանը: Ուսումնասիրվել է ընդհանուր առմամբ 22 բնակավայր, սակայն հաշվի առնելով վարկային միջոցների սահմանափակությունը և նախատեսվող միջոցառումների առաջնահերթությունը, որոշվել է ծրագրում ընդգրկել 17 բնակավայր:

Նախնական ուսումնասիրությունների արդյունքում բնակավայրերում նախատեսվող աշխատանքների ընտրությունն իրականացվել է՝ հաշվի առնելով հետևյալ մոտեցումները.

- Նախատեսվել է ՎՋԵԲ-ի կողմից տրամադրվող վարկային միջոցներն ուղղել բնակավայրերի ՋևՋ համակարգերի բարելավման առավել կենսական, անհապաղ լուծում պահանջող առաջնահերթ միջոցառումների իրականացմանը (օր. Ջերմուկ քաղաքում ԿՄԿ-ի շինարարությունը, որն ուղղված է Սևանա լճի ջրի մաքրության պահպանմանը):
- Ծրագրի իրականացումից հետո առավել շոշափելի և ակնառու արդյունքներ ստանալու համար նախատեսվել է բնակավայրերի Ջ և Ջ համակարգերի առանձին ամբողջական

բաղկացուցիչ տարրերի հիմնանորոգման և տեխնիկական վիճակի բարելավման միջոցառումների իրականացում:

«Հայաստանի փոքր համայնքների ջրամատակարարման ծրագիրը» կիրականացվի հետևյալ համայնքներում:

Աղյուսակ 1-1: Համայնքների ցանկ

Հ	Մարզ	Համայնք
1.	Տավուշ	Իջևան
		Ազատամուտ
		Դիլիջան
2.	Լոռի	Ախթալա
		Սպիտակ
		Ջրաշեն
		Տաշիր
3.	Շիրակ	Արթիկ
4.	Գեղարքունիկ	Սևան
		Ճամբարակ
		Գավառ
		Մարուխան
		Մարտունի
5.	Կոտայք	Բյուրեղավան
		Աբովյան
6.	Սյունիք	Կապան
7.	Վայոց Ձոր	Ջերմուկ

Ծրագրի նպատակների ժամանակին և արդյունավետ իրականացումն ապահովելու նպատակով մրցույթային կարգով ընտրվեց Խորհրդատու (JV Fichtner Water & Transportation GmbH/ «Ջրտուք» ՍՊԸ), որը կաջակցի ՀԶԿ ՓԲԸ-ին նախագծի պատրաստմանը, տեխնիկական հսկողությանը, գնումների, վճարումների, և բոլոր այլ տիպի գործառնությունների իրականացմանը: 2012 թվականի մարտի 21-ին, Ֆիխտներ Ուոթեր և Տրանսպորտեյժն – Ջրտուք ՍՊԸ կոնսորցիումի և «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի միջև կնքվեց Խորհրդատվական պայմանագիր «Ինժեներատեխնիկական աշխատանքներ, նախագծում և պայմանագրի վերահսկողություն» հիշյալ Ծրագրի համար:



Նկար 1-1: Հայաստանի մարզային քարտեզ

Շահագրգիռ կողմերի ներգրավման պլանը (ՇԿՆՊ) մշակվել է համաձայն ՎՋԵԲ-ի Բնապահպանական և Սոցիալական Քաղաքականության (2008), մասնավորապես վերջինիս Պահանջ 10-ի՝ տեղեկատվության հրապարակում և շահագրգիռ կողմերի միջև փոխհարաբերություններ:

ՎՋԵԲ-ի 2008թ.-ի Բնապահպանական և Սոցիալական քաղաքականությունն ու կատարման պահանջները հասանելի են՝ <http://www.ebrd.com/downloads/research/policies/esp08ru.pdf> կայքում:

Շահագրգիռ կողմերի ներգրավվածությունը նշանակում է հաստատուն հարաբերությունների կառուցում և պահպանում այն անձանց հետ, ովքեր տուժել են կամ հետաքրքրված են «ՀԶԿ ՓԲԸ-ի» «Հայաստանի փոքր համայնքների ջրամատակարարման ծրագրի» նախագծով և գործունեությամբ: ՇԿՆՊ տալիս է «ՀԶԿ ՓԲԸ»-ի և տարբեր շահագրգիռ կողմերի միջև հաղորդակցության ընդհանուր նկարագիրը նախագծի տարբեր փուլերում՝ ներառյալ ՇՄԱԳ-ը, նախապատրաստական աշխատանքները, նախագծումը, շինարարությունը, շահագործումը և կոնսերվացումը: Այս հաղորդակցությունը պետք է հեշտացնի գործընթացը նախագծի ողջ ընթացքում, մշակի և հետևի աշխատանքի լավագույն կատարմանը նախագծի յուրաքանչյուր փուլում:

ՇԿՆՊ-ի նպատակն է ժամանակին ապահովել համապատասխան և հասկանալի տեղեկատվությամբ բոլոր շահագրգիռ կողմերին՝ ինչպես նաև խոցելի խմբերին և սոցիալապես անապահով խավերին: ՇԿՆՊ-ում պետք է ներառվեն շահագրգիռ կողմերի տեսանկյունները և մտահոգությունները նախագծի հետ կապված, ինչը հնարավորություն կտա Խորհրդատուին և ՀՋԿ ՓԲԸ-ին հաշվի առնել և արձագանքել դրանց:

Այս ՇԿՆՊ-ը պետք է դիտվի որպես ակտիվ աշխատանքային փաստաթուղթ և թարմացվի եռամսյակային կտրվածքով: Խորհրդատուն և ՀՋԿ ՓԲԸ-ն կգնահատի բոլոր առաջարկությունները ՇԿՆՊ-ի և շահագրգիռ կողմերի միջև շփման գործընթացի բարելավման ուղղությամբ:

Որպես ծրագրի նախաձեռնող, «ՀՋԿ ՓԲԸ-ի» ներկայացնող կոնտակտային անձն է՝

Պրն. Նորիկ Գևորգյան

Ներդրումային Ծրագրերի Համակարգման Տնօրինության տնօրեն

Վարդանանց Փակուղի 8ա, Երևան 0010
Հեռ/Ֆաքս + 374 10 542 877
ngevorgyan@armwater.am

2. ՆԱԽԱԳԾԻ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏԸ

Տեղեկատվության հրապարակումը, հասարակական քննարկումները և շահագրգիռ կողմերի ներգրավվածությունը ՎՁԵԲ-ը համարում է ընթացիկ գործընթաց, որը պետք է սկսվի նախագծի նախապատրաստական աշխատանքների սկզբնական փուլում և շարունակվի նախագծի իրականացման ընթացքում:

ՇԿՆՊ-ը պետք է նախապատրաստվի և իրականացվի ՎՁԵԲ-ի Բնապահպանական և Սոցիալական Քաղաքականության համապատասխան (2008) մասնավորապես նրա տեխնիկական պահանջ 10-ով և ՎՁԵԲ-ի Հասարակական Տեղեկատվության Քաղաքականության (2008):

Հետևյալ միջազգային փաստաթղթերը նույնպես վերաբերում են ՇԿՆՊ-ի նախապատրաստմանը:

- ՄԱԿ-ի ԵՏՀ (Եվրապայի Տնտեսական Հանձնաժողով) Կոնվենցիան ինֆորմացիայի հասանելիության, որոշումներ կայացնելու հարցում հասարակության մասնակցության և բնապահպանական հարցերում արդարադատության մատչելիության վերաբերյալ/Օրհուսի կոնվենցիա:
- ԵԽ-ի Հրահանգ 85/337/EEC, որը լրացվել է Հրահանգ 97/11/EC-ով, շրջակա միջավայրի վրա որոշ հանրային և մասնավոր ծրագրերի հետևանքների գնահատման մասին:

Հայաստանը հանդիսանում է մի շարք կոնվենցիաների և միջազգային պայմանագրերի անդամ, որոնք տրամադրում են նախագծին համապատասխան հանրային քննարկումների հիմունքներ: Դրանք են՝

- Շրջակա Միջավայրի վրա Ազդեցության Գնահատման անդրսահմանային ենթատեքստի Կոնվենցիա (Էսպո, 1991: Կոնվենցիան ՀՀ-ի համար ուժի մեջ է մտել 1997 թվականի սեպտեմբերի 10-ից):

Կոնվենցիայի համաձայն՝ կողմերը պետք է եթե չխոչընդոտեն, ապա հնարավորինս նվազեցնեն վնասակար անդրսահմանային ազդեցությունը: Կոնվենցիայի պահանջների համաձայն՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման փաստաթուղթը պետք է ներառի տվյալ գործունեության նկարագրությունը, նրա նպատակները, ինչպես նաև տվյալ միջոցառումից հրաժարվելու տարբերակը, շրջակա միջավայրի օբյեկտները, որոնք ենթարկվում են բացասական ազդեցության, կանխարգելման միջոցառումների ցուցակ և այլն

- Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման անդրսահմանային ենթատեքստի կոնվենցիայի ռազմավարական շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման արձանագրությունը (Կիև, 2003; Արձանագրությունը ՀՀ-ի համար ուժի մեջ է մտել 2011թ. ապրիլի 24-ին):

Արձանագրությունը նախատեսում է իրականացնել ռազմավարական էկոլոգիական գնահատում (ՌԷԳ) և կողմերի պարտավորեցում ազգային և ռեգիոնալ մակարդակով: Այս պրոտոկոլի համաձայն՝ տարբեր ոլորտների զարգացման համար մշակված ծրագրերն ու նախագծերը և, եթե հնարավոր է, նաև քաղաքականությունն ու օրենսդրությունը ենթակա են ՌԷԳ-ին:

ՇԿՆՊ-ի նախապատրաստման համար նշանակություն ունեցող Հայաստանի իրավական և կարգավորիչ դաշտը հիմնված է հետևյալ հիմնական գործողությունների վրա.

- Օրենք շրջակա միջավայրի փորձաքննության/գնահատման մասին (Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում):
- Կառավարության որոշումը «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության ենթակա նախատեսվող գործունեությունների սահմանային չափերի մասին» (N-139, 30 Մարտ-ի, 1999թ.):
- Օրենք տեղեկատվության ազատության մասին:
- Օրենք բնակչության բնապահպանական կրթության մասին:
- Օրենք պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին:

1995թ.-ին շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին ընդունված օրենքը կարգավորում է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման իրավական, տնտեսական և ինստիտուցիոնալ ասպեկտները:

Համաձայն հոդված 4-ի՝ հետևյալ գործողությունները վերաբերում են ՇՄԱԳ –ին.

ջրային տնտեսության ոլորտում՝

- ջրամբարներ ու պատվարներ, ամբարտակներ, խոշոր ջրանցքներ, մղիչ կայաններ և այլ ջրատնտեսական կառույցներ;
- ստորերկրյա ջրերի արդյունահանում.

քաղաքային տնտեսության ոլորտում

- կեղտաջրերի մաքրման կայաններ.

ՀՀ կառավարության N 193 որոշման համաձայն՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության են ենթակա նախատեսվող այն գործունեությունները, որոնց ցուցանիշները գերազանցում են հետևյալ սահմանային չափը

Ենթակառույցների ոլորտում՝

գազի, նավթի, գոլորշու և ջրատար խողովակաշարերը, կոյուղու կոլլեկտորները՝ 300 միլիմետր տրամագծով:

Այնուհետ, ՇՄԱԳ-ի վերաբերյալ օրենքը սահմանում է նախատեսվող գործողությունների մասին ծանուցման ընթացակարգ (Հոդված 6):

Երբ նախատեսվող գործունեության ձեռնարկողը՝ ՀՋԿ ՓԲԸ-ն, տեղեկացնում է լիազորված մարմինն՝ տեղական ինքնակառավարման մարմինն, որը պատասխանատու է վարչական տարածքում բոլոր փորձագիտական ծրագրերի համար, որտեղ առաջարկվում է անցկացնել նախատեսված գործունեությունը, լիազորված մարմինը պետք է 7 օրվա ընթացքում տեղեկացնի տեղական համայնքին և 15 օրվա ընթացքում կազմակերպի հանրային լսումներ: Համայնքի կողմից մեկնաբանությունների բացակայությունը դիտարկվում է որպես դրական պատասխան իրավասու մարմիններին: 30 օրվա ընթացքում իրավասու մարմինը պետք է տեղեկացնի նախաձեռնող կողմին վերջնական որոշումը այն մասին, թե ՇՄԱԳ պետք է իրականացնել, թե ոչ:

Հաջորդ քայլը իրավասու մարմինների կողմից պահանջվող փաստաթղթերի ներկայացնելն է, որը նա անմիջապես ուղարկում է «մարզի կամ համայնքի ղեկավարներին, համապատասխան պետական մարմինն և ազդակիր համայնքին»:

Ազդակիր համայնքի ղեկավարները 5-օրյա ժամկետում լրատվական միջոցներով տեղեկացնում են, թե որտեղ և երբ է հնարավոր ծանոթանալ և տվյալներ ստանալ (գրավոր կամ բանավոր) փաստաթղթերի մասին:

Լսումները, որին մասնակցում են ազդակիր համայնքի ղեկավարները և ձեռնարկող կողմը, պետք է ավարտված լինեն 30 օրվա ընթացքում: Եթե տուժել է ավելի քան մեկ համայնք հասարակական լսումների վայրը որոշում է լիազորված մարմինը:

Հանրային լսումների 10 օրերի ընթացքում համայնքների ղեկավարները ներկայացնում են հանրային կարծիքը լիազորված մարմիններին: Բացի այդ, համապատասխան պետական մարմինների կարծիքները պետք է ուղարկվեն լիազորված մարմիններին 30 օրվա ընթացքում՝ վերանայելու համար: 9-րդ հոդվածի համաձայն, փաստաթղթի գնահատման փորձագիտական բանաձևը (եզրակացությունը) պետք է կիրառվի լիազորված մարմինների կողմից հատուկ վկայականներ ստացած անձանց և/կամ իրավաբանական մարմինների կողմից: Փորձագիտական եզրակացությունը պետք է տրվի ՇՄԱԳ փաստաթղթերը ստանալուց 70 օր հետո՝ հաշվի առնելով նաև հանրության և համապատասխան հասարակական հաստատությունների կարծիքը: Պարզաբանումներ ստանալու նպատակով լիազորված մարմինը կարող է նշված ժամկետը երկարացնել մինչև 180 օր:

Փորձագիտական եղրակացությունը ստանալուց հետո 30 օրվա ընթացքում լիազորված մարմինը պետք է կազմակերպի հանրային լսումների երկրորդ փուլը:

Հանրային լսումների 20 օրերի ընթացքում լիազորված մարմինը պետք է կատարի իր վերջնական որոշումը/բանաձևը գնահատման վերաբերյալ:

Մովորաբար գնահատման եզրակացությունը հանձնվում է ծրագրի նախաձեռնողին 120 օրերի ընթացքում: Փորձաքննության եզրակացությունը ուժի մեջ է տրման ամսաթվից:

Պատմական և մշակութային անշարժ հուշարձանների մասին օրենքը (1998թ.-ի Նոյեմբերին ընդունված) անդրադառնում է հետևյալ բնագավառներին. (i) պատմական և մշակութային հուշարձանների հասկացողություն, (ii) նրանց պահպանման և օգտագործման կարգը, (iii) հուշարձանների դասակարգումը, (iv) պետական և տեղական ինքնակառավարման մարմինների իրավունքներն ու պարտականությունները՝ հուշարձանների պահպանության և օգտագործման հետ կապված, (v) հուշարձանների պետական գրանցման կարգը: Այն ապահովում է հուշարձանների և պատմական միջավայրի պահպանման հիմունքները, աջակցում հուշարձանների և հնագիտական պեղումների ուսումնասիրություններին:

3. ՇԱՀԱԳՐԳԻՌ ԿՈՂՄԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

Շահագրգիռ կողմերը այն կազմակերպություններն ու անհատներն են, որոնք հետաքրքրված են, պատասխանատու են կամ տուժում են առաջարկվող նախագծից: Ջրային ծառայություն մատուցող ընկերության՝ ՀՋԿ ՓԲԸ աշխատակիցները նախագծի ներքին շահագրգիռ կոմերն են:

Մյուս մասնակիցները՝ արտաքին շահագրգիռ կողմերն են: Շահագրգիռ կողմերի իդենտիֆիկացիան իրականացվում է նախնական նախագծի կազմավորման ընթացքում, տնտեսատեխնիկական հետազոտության, ինչպես նաև ՇՄԱԳ-ի ժամանակ: Շահագրգիռ կողմերի հետևյալ խմբերը բնութագրվել են այսպես.

- Միջազգային կազմակերպություններ – նրանցից հիմնական ֆինանսավորման հաստատությունն է ՎՋԵԲ-ը, և այլ միջազգային կազմակերպություններ, որոնք աջակցում են Հայաստանում ջրամատակարարման և ջրահեռացման բարեփոխումներին ուղղված տարբեր միջոցառումների:
- Պետական կառավարական մարմիններ՝ ունեն ազգային իշխանությունների գործառույթներն ու պարտականությունները, որոնք կապված են ծրագրի նախապատրաստման և իրականացման հետ :
- Տարածքային կառավարման հաստատություններ՝ ունեն տարածաշրջանային իշխանությունների գործառույթներն ու պարտականությունները, որոնք կապված են ծրագրի նախապատրաստման և իրականացման հետ:
- Ծրագրի իրականացման մարզային, քաղաքային և տեղական իշխանություններ:
- Ծրագրի իրականացման վայրերի բնակիչներ – ակնհայտ է, որ քաղաքների և գյուղական տարածքների տեղական համայնքների և անհատական տնային տնտեսությունների վրա կազդեն ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի փոփոխությունները, վերջիններս կունենան սովյալ ծառայությունների բարելավված սպասարկում և այդպիսով կդառնան նախագծի շահառուները; հատուկ ուշադրություն պետք է դարձնել առավել խոցելի խմբերի շահերին:

- Հողատերեր/հողօգտագործողներ և ԿՄԿ-ի մոտ գտնվող բնակավայրերի բնակիչներ – նրանց վրա կազդեն ԿՄԿ-ի կառուցման և շահագործման հետ կապված միջոցառումները:
- ՀԿ-ներ - մի շարք տեղական և միջազգային հասարակական կազմակերպություններ ունեն Հայաստանի տարբեր մարզերում ջրամատակարարման և ջրահեռացման վերաբերյալ հանրային քննարկումների գործունեության արժեքավոր փորձ և ցուցաբերել են հետաքրքրություն ծրագրին: Հայաստանի մարզերում գործող Օրհուսի կենտրոնները նույնպես հանդիսանում են ծրագրի շահագրգիռ կողմ:
- Հայկական խորհրդատվական ընկերություններ, հետազոտական կենտրոններ – նրանք զբաղվում են Հայաստանում քաղաքային տարածքների հատակագծերի մշակմամբ, տարբեր ծրագրերի նախապատրաստմամբ և ուսումնասիրությամբ, ինչպես նաև ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի ծրագրերով:
- Զանգվածային լրատվամիջոցներ – Հայաստանի ԶԼՄ-ները սովորաբար ակտիվ են հասարակությանը հետաքրքրող միջազգային ծրագրերի վերաբերյալ ցանկացած նորություններ ձեռք բերելու և ներկայացնելու հարցում:
- Կապալառուներ և մատակարարներ – տարբեր շինարարական ընկերություններ և սարքավորումների մատակարարներ կարող են շահագրգռված լինել նախագծով, որպես նրանց համար աշխատանքի հնարավորություն է ստեղծում:

Իդենտիֆիկացված շահագրգիռ կողմերի ցուցակը և նրանց կոնտակտային տվյալները ներկայացված են [հավելված 1](#)-ում: Նախագծի պատրաստման և իրագործման ընթացքում տարբեր շահագրգիռ կողմերի կազմն ու պարտականությունները կենթարկվեն որոշակի փոփոխությունների:

4. ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ՆԱԽԱԳԾԻ ՄՇԱԿՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Տեխնիկատնտեսական հետազոտության ընթացքում խորհրդատուի թիմը իրականացրել է տեղանքի ուսումնասիրություններ և մի շարք հանդիպումներ է անցկացրել Տավուշ, Լոռի, Շիրակ, Գեղարքունիք, Կոտայք, Սյունիք և Վայոց Ձորի մարզերի Իջևան, Ագատամուտ, Դիլիջան, Տաշիր, Ախթալա, Սպիտակ, Աբովյան, Բյուրեղավան, Սևան, Գավառ, Մարտունի, Ճամբարակ, Ջերմուկ և Կապան քաղաքներում: Ծրագրի սկզբից մինչ 28.12.2013թ. ընկած ժամանակահատվածում հանդիպումներ են տեղի ունեցել Աբովյան, Բյուրեղավան, Սևան, Իջևան, Ագատամուտ, Դիլիջան, Տաշիր, Ախթալա, Սպիտակ, Ճամբարակ, Գավառ, Մարուխան, Մարտունի, Ջրաշեն, Կապան, Ջերմուկ, Արթիկ համայնքներում:

Սույն թվականի IV եռամսյակում տեղի են ունեցել հանդիպումներ ինչպես տեխնիկական և բնապահպանական հարցերի պարզաբանման, այնպես էլ հսկողության իրականացման համար: Հանդիպումների նկարները ներկայացված են [հավելված 6](#)-ում:

Ստորև ներկայացվում են հանդիպումները աղյուսակով:

Աղյուսակ 4-1: Հանդիպումների ցանկ

Հանդիպման վայրը	Ժամանակահատված	Մասնակիցներ	Հիմնական նպատակ
Երևան	01/10/13	Խորհրդատու, ՀԶԿ ՆԾՀՏ, շինարար	Հանդիպում կապալառուի հետ Դիլիջանի ծրագրի մեկնարկի համար
Դիլիջան, Ջերմուկ	02/10/13	Խորհրդատու, ՀԶԿ ՆԾՀՏ, շինարար	Քննարկում Դիլիջանի և Ջերմուկի ՋՄԿ –ի վերաբերյալ
Ճամբարակ	31/10/13	Խորհրդատու, ՀԶԿ ՆԾՀՏ	Հեղինակային հսկողություն
Գավառ, Մարուխան	31/10/13	Խորհրդատու, ՀԶԿ ՆԾՀՏ	Հեղինակային հսկողություն
Սևան	31/10/13	Խորհրդատու, ՀԶԿ ՆԾՀՏ	Հեղինակային հսկողություն
Ճամբարակ	31/10/13	Խորհրդատու, ՀԶԿ ՆԾՀՏ, շինարար	Հանդիպում կապալառուի հետ Ճամբարակի ծրագրի մեկնարկի համար
Իջևան, Ագատամուտ	01/11/13	Խորհրդատու, ՀԶԿ ՆԾՀՏ, շինարար	Հանդիպում կապալառուի հետ Իջևանի և Ագատամուտի ծրագրի մեկնարկի համար
Գավառ, Մարուխան	05/11/13	Խորհրդատու	Հեղինակային հսկողություն և փոփոխված պատվերի համար տվյալների հավաքագրում
Երևան	05/11/13	Խորհրդատու, ՀԶԿ ՆԾՀՏ, շինարար	Հանդիպում կապալառուի հետ Մարտունու ծրագրի մեկնարկի համար
Դիլիջան, Ջերմուկ	05/11/13	Խորհրդատու, ՀԶԿ ՆԾՀՏ, շինարար	Քննարկում Դիլիջանի և Ջերմուկի ՋՄԿ –ի վերաբերյալ
Երևան	06/11/13	Խորհրդատու, ՀԶԿ ՆԾՀՏ	Ընդհանուր քննարկում

Արթիկ	07/11/13	Խորհրդատու, ՀԶԿ ՆԾՀՏ, շինարար	Հանդիպում կապալառուի հետ Արթիկի ծրագրի մեկնարկի համար
Բյուրեղավան	11/11/13	Խորհրդատու	Հեղինակային հսկողություն
Երևան	12/11/13	Խորհրդատու, բնապահպանական փորձաքննության փորձագետ	Կապան քաղաքի նախագծի վերաբերյալ մասնագիտական եզրակացության, ազդակիր համայնքի և հասարակական կարծիքի հասարակական լուսմներ
Երևան	13/11/13	Խորհրդատու, բնապահպանական փորձաքննության փորձագետ	Ջերմուկ քաղաքի նախագծի վերաբերյալ մասնագիտական եզրակացության, ազդակիր համայնքի և հասարակական կարծիքի հասարակական լուսմներ
Աբովյան, Բյուրեղավան	18/11/13	Խորհրդատու	Հեղինակային հսկողություն
Սպիտակ	19/11/13	Խորհրդատու	Հեղինակային հսկողություն
Իջևան, Ագատամուտ	21/11/13	Խորհրդատու	Հեղինակային հսկողություն
Իջևան, Ագատամուտ	10/12/13	Խորհրդատու	Հեղինակային հսկողություն
Երևան	12/12/13	Խորհրդատու, ՀԶԿ ՆԾՀՏ	Մեվանի մասին քննարկում
Երևան	12/12/13	Խորհրդատու, ՀԶԿ ՆԾՀՏ, շինարար	Սևանի փոփոխված պատվեր թիվ 2-րդ-ի վերաբերյալ քննարկում
Երևան	13/12/13	Խորհրդատու, ՀԶԿ ՆԾՀՏ, շինարար	Հանդիպում կապալառուի հետ Գավառի և Մարուխանի ծրագրի մեկնարկի համար
Երևան	13/12/13	Խորհրդատու, ՀԶԿ ՆԾՀՏ, շինարար	Հանդիպում կապալառուի հետ Սպիտակի, Ջրաշենի և Ախթալայի ծրագրի մեկնարկի համար
Երևան	16/12/13	Խորհրդատու, ՀԶԿ ՆԾՀՏ, շինարար	Հանդիպում կապալառուի հետ Կապանի ծրագրի մեկնարկի համար
Երևան	16/12/13	Խորհրդատու, ՀԶԿ ՆԾՀՏ, շինարար	Հանդիպում կապալառուի հետ Ջերմուկի ծրագրի մեկնարկի համար

Հսկողության շրջանակներում ստուգվել է նախագծային լուծումների համապատասխանությունը փաստացի կատարված շինարարական աշխատանքների հետ, ինչպես նաև բնապահպանական միջոցառումների իրականացումը համաձայն ՇՄԿՂ-ի:

Կապալառուների հետ քննարկվել են նախագծի վերաբերյալ նրանց առաջարկներն ու դիտողությունները:

5. ՆԱԽԱԳԾԻ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ԵՎ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ԾՐԱԳԻՐ

5.1 Տեղեկատվության հրատարակում էլեկտրոնային և տպագիր տարբերակով

Ծրագրի վերաբերյալ որոշ փաստաթղթեր (պայմանագրեր, մրցութային հայտարարություններ և այլն) ներկայացված են www.ebrd.com ինչպես նաև www.procurement.am կայքերում:

«Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ն հանրությանը ներկայացնում է ՎՋԵԲ բնապահպանական և սոցիալական քաղաքականության ու բողոքարկման մեխանիզմների ամփոփագիրը: Որպես «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի տարեկան հաշվետվության մաս, www.armwater.am կայքում տեղադրվում են բնապահպանական և սոցիալական ազդեցությունները, առողջապահության և անվտանգության կատարողականները, արտաքին բողոքի մեխանիզմները: Դրանք ներկայացվում են նաև գյուղապետարանի/քաղաքապետարանի գրասենյակներում, ինչպես նաև տրամադրվում դիմելու դեպքում:

Կապան և Ջերմուկ քաղաքների նախագծի վերաբերյալ մասնագիտական եզրակացության, ազդակիր համայնքի և հասարակական կարծիքի հասարակական լուսմների անցկացման հայտարարությունները տպագրվել են 2013թ. նոյեմբերի 1-ին Հայաստանի Հանրապետություն օրաթերթում:

5.2 ՇՄՍԳ փաթեթի մշակում և ներկայացում հանրությանը

ՀՀ օրենսդրության պահանջներին համաձայն՝ Ջերմուկ քաղաքի ջրահեռացման ցանցի բարելավում և Կապան քաղաքի ջրամատակարարման ցանցի բարելավում ծրագրերը պահանջում են բնապահպանական փորձաքննության անցկացում և համապատասխան եզրակացության ձեռքբերում: Այդ նպատակով նախորդ եռամսյակում պատրաստվել և ներկայացվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը» երկու քաղաքների համար: Այնտեղ բերված են նախագծի սեղմ նկարագրությունը, բնապահպանական հիմնական պայմանների (հողային, ջրային ռեսուրսների, կենսաբազմազանության) նկարագրությունը, վերլուծվել են բնապահպանական և սոցիալական դրական և բացասական ազդեցությունները շրջակա միջավայրի վրա, առաջարկվել են դրանց մեղմացնելու միջոցառումները, կազմվել է շրջակա միջավայրի կառավարման պլան:

Կապան և Ջերմուկ քաղաքների նախագծերի վերաբերյալ մասնագիտական եզրակացության, ազդակիր համայնքի և հասարակական կարծիքի հասարակական լուսմներ են անցկացվել խորհրդատուի գրասենյակում համապատասխանաբար նոյեմբերի 12-ին և 13-ին:

5.3 ՇՄԱԳ փաթեթի վերաբերյալ մեկնաբանությունների ստացում

«Ջերմուկ քաղաքի ջրահեռացման ցանցի բարելավում» և «Կապան քաղաքի ջրամատակարարման ցանցի բարելավում» ծրագրերի վերաբերյալ «Բնապահպանական Փորձաքննություն» ՊՈԱԿ-ի կողմից ստացվել է դրական եզրակացություն և ՇՄԱԳ-ի վերաբերյալ որևէ դիտողություն չի ստացել:

5.4 Շահառուների ներգրավվածության ծրագիր

Աշխատանքների մեկնարկից մոտ երկու շաբաթ առաջ շինարարական աշխատանքների թարմացված գրաֆիկը կներկայացվի յուրաքանչյուր գյուղապետի/քաղաքապետի գրասենյակ: Աշխատանքների և բողոքի ներկայացման մեխանիզմների հասանելիության վերաբերյալ տեղեկատվությունը կտրամադրվի նաև «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի համապատասխան ստորաբաժանումներում:

Շահառուների ցանկը և ներգրավման մեխանիզմները ներկայացված են [հավելված 5](#)-ում:

6. ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ

ՀՓՔՁԾ-ի բոլոր փուլերում (տեխնիկատնտեսական ուսումնասիրություն, ՇՄԱԳ ընթացակարգ, շինարարություն, շահագործում և պահպանում, օբյեկտի փակում և փակումից հետո տեղանքի վերականգնում) ծրագրի շահառուներին պետք է հնարավորություն տրվի ներկայացնել իրենց մեկնաբանությունները, բողոքները, տեղեկատվության հարցումները և ստանալ հետադարձ կապ հաղորդակցության հարմար ուղիներով: Այդ ուղիները և հաղորդակցության գործընթացն այն բողոքարկման մեխանիզմի բաղադրիչներն են, որը պետք է ստեղծի և մատչելի դարձվի ծրագրի ընթացքում: Մեխանիզմը կարող ճշգրտվել ՀՓՔՁԾ-ի ընթացքում: Այդ դեպքում փոփոխությունների մասին տեղեկությունները պետք է ստանալով շահառուներին: «Բողոքարկում» տերմինը ենթադրում է խնդրի առկայության հավանականություն: Սակայն, գործնականում, համայնքներին հաճախ հարմար է օգտագործել նույն ուղիները ոչ միայն բողոք հայտնելու, այլ նաև հարցեր ուղղելու, տեղեկատվություն խնդրելու և առաջարկություններ անելու համար: Համայնքները կարող են օգտագործել այս ուղիները նաև իրենց դրական հետադարձ կապը հայտնելու համար: Սույն Ծրագրի կողմնակիցները պետք է հիշեն, որ չպատասխանած հարցերը կամ ուշադրության չարժանացած խնդրանքները կարող են պրոբլեմի վերածվել, ուստի դրանց պետք է անդրադառնալ անմիջապես: Հարց տված կամ խնդրանք ներկայացրած անձին (անձանց) անհրաժեշտ է ծանուցել, թե ով է պատասխանելու դրան և երբ: Ծրագրի ՇԿՆՊ-ն ներառում է արտաքին և ներքին շահառուներից բողոքներ ստանալու և դրանց անդրադառնալու մեխանիզմներ:

6.1 Բողոքարկման մեխանիզմ արտաքին շահառուների համար

Արտաքին շահառուների համար բողոքարկման մեխանիզմը մի գործընթաց է, որը կենտրոնանում է հիմնականում ՀՓՔՁԾ-ի մակարդակով ազդակիր համայնքներից ծրագրի հետ առնչվող բողոքները ստանալու, գնահատելու և դրանց անդրադառնալու վրա: Բողոքարկման մեխանիզմը տարբերվում է վեճեր լուծելու այլ մեխանիզմներից (օրինակ, դատարաններ, վարչական համակարգ և այլն) նրանով, որ նա առաջարկում է տեղական, պարզեցված և փոխադարձ շահավետ ձևով հարցը կարգավորելու առավելությունները՝ ՀՓՔՁԾ-ի և համայնքի միջև հարաբերությունների շրջանակներում:

Բողոքարկման մեխանիզմի ճիշտ ձևով նախագծված և իրականացված կառավարման ընթացակարգերը կարող են օգուտ բերել ինչպես ՀՓՔՁԾ-ին, այնպես էլ համայնքներին՝

ավելացնելով փոքր վեճերն արագ, առանց մեծ ծախսերի և ողջամտորեն արդարացի կերպով լուծելու հավանականությունը՝ առանց փոխանցելու բողոքը վեճեր լուծելու այլ (պաշտոնական) մարմիններ: Բողոքարկման մեխանիզմները կարող են օգնել ի հայտ բերելու և լուծելու հարցը՝ առանց հասցնելու այն մինչև պաշտոնական կարգավորման մեթոդները, ներառյալ դատարանները: Որպեսզի բողոքարկման մեխանիզմը գործի արդյունավետ, կարևոր է որոշել բողոքի հետ աշխատանքի կառուցվածքը, նշանակել պատասխանատուներ մեխանիզմի իրականացման համար և բացատրել դրանք շահառուներին:

ՀՓՀՁԾ արտաքին շահառուների հարցերի, բողոքների և առաջարկությունների համար կոնտակտային հասցեն հետևյալն է.

Պրն. Նորիկ Գևորգյան
Ներդրումային Ծրագրերի Համակարգման Տնօրինության տնօրեն

Վարդանանց Փակուղի 8ա, Երևան 0010
Հեռ/Ֆաքս + 374 10 542877
ngevorgyan@armwater.am

Հասարակական դժգոհությունների նախնական ձևը ներկայացված է [հավելված 2](#)-ում:

Բողոքարկման մեխանիզմները ազդակիր համայնքների կարիքների վրա կենտրոնացնելու անհրաժեշտությունը հիմնավորվում է այն հանգամանքով, որ այդ համայնքները գտնվում են ծրագրի աշխատանքների ուղղակի, իսկ երբեմն նաև նշանակալի ազդեցության տակ, սակայն հաճախ չունեն կենսունակ հնարավորություն կամ կարողություն իրենց հարցը պաշտոնական կառույցներում, օրինակ՝ դատարաններում, բարձրացնելու համար: Դա հատկապես վերաբերում է համայնքի խոցելի խմբերին: Ծրագրի բողոքարկման մեխանիզմն արագ մատչելի միջոց է ապահովում համայնքների համար, որը թույլ է տալիս ուղղակիորեն, արագ և առանց որևէ ծախսերի, ներգրավելու նրանց և ընկերությանը խնդրի լուծմանը: Որպեսզի բողոքարկման մեխանիզմը լինի արդյունավետ, ծրագրի բոլոր շահառուները պետք է հասկանան այն և պաշտպանեն դրա նպատակները: Ազդակիր համայնքները պետք է տեղյակ լինեն և հասկանան, թե ինչ օգուտներ են բերում իրենց բողոքարկման մեխանիզմները: Կախված տեղական համայնքների վրա ծրագրի թողած ազդեցություններից, բողոքները կարող են փոխվել ըստ ծրագրի փուլերի: Շատ դեպքերում բողոքներն ամենից քիչ են նախաշինարարական փուլում, դրանք հասնում են առավելագույնի շինարարության ժամանակ, և համեմատաբար քիչ են աշխատանքներն ավարտելիս: Սովորաբար, շինարարության փուլում ազդեցությունների մասշտաբն ավելանում է, և համայնքների

սպասումները տնտեսական օգուտներից ամենից բարձրն են: Ծրագրի բողոքարկման մեխանիզմը պետք է անդրադառնա նաև նախապես չակնկալված բողոքներին: ՀՓՔՁԾ-ն պետք է պարբերաբար ստուգի բողոքարկման գործընթացի համապատասխանությունը մասնակից համայնքների հետ և համաձայնեցնի փոփոխությունները: Հանրային լսումների ժամանակ բարձրացրած հարցերը և մեկնաբանությունները կգրանցվեն և հաշվի կառնվեն նախագծման և ՀՓՔՁԾ-ի իրականացման ժամանակ:

6.2 Բողոքարկման մեխանիզմ ներքին շահառուների համար

Ծրագիրը կստեղծի բողոքարկման մեխանիզմ ներքին շահառուների համար, այդ թվում՝ ՀՋԿ-ի աշխատողների և ՀՓՔՁԾ-ի իրականացման մեջ ներգրավված կապալառուների աշխատողների համար:

6.3 Բողոքարկման մեխանիզմ աշխատողների համար

Համաձայն ԶՎԵԲ ԿՊ2-ի, «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ն կապահովի բողոքարկման մեխանիզմ աշխատողների համար (և նրանց կազմակերպությունների համար, եթե դրանք գոյություն ունեն), որպեսզի նրանք կարողանան բարձրացնել իրենց աշխատանքային վայրի հետ առնչվող ողջամիտ մտահոգությունները: Մեխանիզմը պետք է ներառի ղեկավարության համապատասխան մակարդակ և առանց հապաղելու անդրադառնա մտահոգող խնդրին՝ հասկանալի և թափանցիկ գործընթաց կիրառելու միջոցով, որը հետադարձ կապահովի մտահոգություն հայտնողների հետ՝ առանց որևէ հետևանքների վերջիններիս համար: Բողոքարկման մեխանիզմը պետք է չխոչընդոտի դիմելն այլ վարչական կամ դատական ասյաններին, որոնք մատչելի են օրենքով կամ միջնորդային դատավարության միջոցով, ոչ էլ փոխարինի կոլեկտիվ համաձայնագրերով նախատեսված բողոքարկման մեխանիզմները: ԶՎԵԲ ԿՊ2-ի 19 բաժինն ասում է նաև, որ բողոքարկման մեխանիզմը մատչելի պետք է լինի նաև ոչ վարձով աշխատող աշխատողների համար: Բողոքարկման մեխանիզմը պաշտոնապես նկարագրված է ՀՀ «Աշխատանքային օրենսգրքում» (25-27 հոդվածներ): Մեխանիզմը պետք է նաև կազմի ՀՋԿ ՓԲԸ-ի անձնակազմի աշխատանքային պայմանագրերի մասը: Այդ փաստաթղթերը կարգավորում են գործատուի և արհմիության դերերը, իրավունքները և պարտականությունները: Աշխատողները պետք է իմանան այդ դերերը, կոլեկտիվ պայմանագրի պայմանները, ինչպես նաև համապատասխան արհմիության նախագահի կոնտակտային մանրամասները:

Բողոքները այն դժգոհությունները և խնդիրներն են, որոնք աշխատողները բարձրացնում են իրենց գործատուների առջև: Դրանք կարող են առնչվել տարբեր փոքր ու մեծ խնդիրների հետ, օրինակ՝ ինչպես են վերաբերվում աշխատողներին, գործողություններ, որ գործատուն մտադիր է իրականացնել, խտրականություն աշխատատեղում, ավելի մանր ամենօրյա վեճեր, ինչպես օրինակ՝ վատ հարաբերություններ երկու աշխատողների միջև կամ անհամաձայնություն արձակուրդների հարցում և այլն:

Կարևոր է, որ դժգոհության դեպքում աշխատողներն իմանան իրականացվելիք գործողությունները: Անհրաժեշտ է ապահովել այնպիսի ընթացակարգեր, որ բոլորի հանդեպ համանման պայմաններում ցուցաբերվի նույն վերաբերմունքը, խնդիրները լուծվեն արդար ու ողջամիտ կերպով և ժամանակին: Աշխատողների բողոքարկման մեխանիզմի հիմնական սկզբունքները ներկայացված են 6-1- աղյուսակում:

Աղյուսակ 6-1: Ծրագրում ներգրավված ընկերությունների աշխատողների բողոքարկման մեխանիզմի սկզբունքները.

Սկզբունք	Նկարագրություն
